ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԲԱՆՏԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՑ

(Ծննդյան 120-ամյակի առթիվ)

Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի (1897–1937 թթ.) մասին շատ է գրվել: Նրա ստեղծագործության ու անձի շուրջ մինչ օրս ստեղծվել է հարուստ գրականություն՝ հուշագրական, գրականագիտական, լեզվաբանական, գրաքննադատական և այլն: Հրապարակվել են բանաստեղծի կյանքի ու գործի հետ կապված վավերագրեր և այլն:

Սույն հրապարակմամբ գրականագետների ու ընթերցասեր շրջանակների ուշադրությանն է հանձնվում Ե. Չարենցի առաջին բանտարկության վերջին փուլի հետ կապված, բուժվելու նպատակով նրան վաղաժամկետ պայմանական ազատելու վերաբերյալ մեր կողմից հայտնաբերված 11 թերթից բաղկացած փաստաթղթերի շարք, այդ թվում՝ երկուսը կալանավոր բանաստեղծի ինքնագիր դիմումներ, որոնք լրացուցիչ լույս են սփռում նրա կալանքից ազատվելու գործընթացի վրա:

Արխիվային այդ վավերագիր նյութը պահվում է Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ՀՍԽՀ դատախազության 571 ֆոնդում[1]:

Խնդրի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար ներկայացնենք այն հանգամանքները, որոնց հետևանքով Ե. Չարենցը հայտնվեց Երևանի կենտրոնական ուղղիչ բանտում:

Հայտնի է, որ բանաստեղծը երկու անգամ հայտնվել է խորհրդային բանտում. առաջին անգամ՝ քրեական օրենսգրքի հոդվածով 1926–1927 թթ. վեցամսյա կալանք կրելուց հետո վաղաժամկետ պայմանական ազատ է արձակվել, իսկ երկրորդ անգամ, փաստորեն, քաղաքական մեղադրանքով 1937 թ. չորսամսյա կալանք է կրել, ենթարկվել է տանջանքների, չի վերադարձել և նույնիսկ մինչ օրս անհայտության մեջ է նրա աճյունը:

Առաջինի դեպքում ամեն ինչ սկսվեց նրանից, որ երիտասարդ գրողը 1926 թ. սեպտեմբերի 5-ին՝ կիրակի օրը՝ ուշ գիշերին (մոտ ժամը 24-ին) Երևանի փողոցում հուզական վիճակում ատրճանակի երկու կրակոց է արձակել 16-ամյա Մարիաննա Այվազյանի վրա՝ պատճառելով ոտքի թեթև վնասվածք[2]: Չարենցն այն արել է երիտասարդ օրիորդին սիրահարված լինելու հոգեկան ծանր ապրումների պայմաններում[3]: Ի դեպ,

---

[1] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 571, ց. 1, գ. 13, թ 13–23:*

[2] *Տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Եղիշե Չարենցի կյանքի էջերից.– «Նորք» (Երևան), 1997, թիվ 4, էջ 63, ն ո ւ յ ն ի՝ Ե. Չարենցը Երևանի ուղղիչ տանը.– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), 1990, № 2, էջ 113, Հ. Չ ա ր խ չ յ ա ն. Չարենցի կրակոցը, Երևան, 2010, էջ 77, 105–106:*

[3] *Տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Ե. Չարենցը Երևանի ուղղիչ տանը, էջ 113:*

Մարիաննան եղել է հայտնի երգահան Արտեմի Այվազյանի քույրը: Ե. Չարենցը դեպքի վայրում ձերբակալվել և տարվել է Երևանի միլիցիատան քրեական բաժին: Կատարվածի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Մարիաննայի հայրը՝ Սարգիս Այվազյանը, միջնորդել է, որ մեղմ վերաբերվեն բանաստեղծին: Նույն կերպ հանդես է եկել դատապաշտպան, հայտնի իրավաբան Գրիգոր Չուբարյանը՝ առաջարկելով գրողի նկատմամբ սահմանել մեղմ պատժաչափ՝ փաստարկելով, որ հանցանքի կատարման պահին նա եղել է անմեղսագիտակ: ՀՍԽՀ Գլխավոր դատարանը մեղադրյալ Ե. Չարենցին դատապարտել է 3 տարվա ազատազրկման քրեական օրենսգրքի 14,144 հոդվածով, առանց խիստ մեկուսացման: Դատավարությունից հետո Չարենցը փոխադրվել է Երևանի կենտրոնական բանտ, որը խորհրդային երկրում քաղաքական ու քարոզչական նպատակներով կոչվել է «Ուղղիչ տուն»: Սակայն դեպքերն այնպես են դասավորվում, որ բանաստեղծը 3 տարվա փոխարեն կալանված է մնում շուրջ վեց ամիս: Այդ ընթացքում նա ընտրվել է ուղղիչ տան կուլտկրթական բաժնի սեկցիաներից մեկի հանձնաժողովի նախագահ:

Հաշվի առնելով Չարենցի առողջական վիճակի վատթարացումը, սիրելի կնոջ՝ Արփենիկի հիվանդությունը և 1927 թ. հունվարի 2-ին՝ մահը՝ Հայաստանի վերադաս մարմինների համապատասխան որոշումներով, մտավորականության կոլեկտիվ դիմում-միջնորդություններով քայլեր են ձեռնարկվում բանաստեղծին վաղաժամկետ կալանքից ազատելու ուղղությամբ: Բանաստեղծին բանտից ազատման գործով առանձնապես մտահոգ են եղել ՀԿ/բ/Կ ԿԿ-ի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը և լուսժողկոմ Ասքանազ Մռավյանը[4]: Վերջինիս միջնորդությամբ 1927 թ. հունվարի 4-ին ԿԿ-ը որոշում է ուղիներ ու հիմնավորումներ գտնել Չարենցին բանտից ազատելու: Բժշկական հանձնաժողովի՝ հունվարի 8-ին տված եզրակացության հիման վրա Ն. Գ. ժողկոմատի կալանավայրերի բաժնին կից գործող Բաշխիչ հանձնաժողովը նույն օրը միջնորդել է ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) նախագահության առաջ՝ փոխելու Չարենցի խափանման միջոցը, պայմանական ազատելու կալանքից՝ հնարավորություն տալով մեկնելու որևէ առողջարան՝ հոգեկան հիվանդությունը բուժելու: Հունվարի 10-ին Բաշխիչ հանձնաժողովի որոշումը ներկայացվել է ԿԳԿ: Հարցը լսվել է այդտեղ հունվարի 12-ի նիստում և դրական եզրակացությամբ համապատասխան հանձնարարական է տրվել Արդարադատության ժողկոմատին: Դրանից հետո հանրապետության դատախազության միջնորդությամբ Գլխավոր դատարանը հունվարի 21-ին որոշում է կայացրել Չարենցին կալանքից ազատելու վերաբերյալ, սակայն պայմանով, որ նա պարտադիր բուժման մեկնի՝ նյարդային հիվանդություններ բուժող առողջարաններից մեկում: Բուժման մեկնելու պայմանի դատական ձևակերպման շուրջ Չարենցը դժգոհություն է հայտնել: Այդ և այլ տեխնիկական պատճառներով ազատման հարցն ավելի քան

---

[4] *Տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Եղիշե Չարենցի կյանքի էջերից, էջ 66:*

մեկ ամիս հետաձգվել է, որն առաջ է բերել գրողի բուռն վրդովմունքը (այդ մասին խոսք կլինի մեր կողմից հրապարակվող Ե. Չարենցի ինքնագիր դիմումում): Վերջապես Բաշխիչ հանձնաժողովը, հիմք ընդունելով Գլխավոր դատարանի վճիռը, 1927 թ. փետրվարի 24-ին որոշում է. «Ե. Չարենցին վաղաժամկետ ազատել կալանքից և ուղարկել բժշկվելու իր սեփական միջոցներով: Հսկողությունը վերապահել Ներքգործժողկոմատին»[5]: Դրանից հետո նա մեկնում է Հյուսիսային Կովկաս՝ Մայկոոպ՝ իր հարազատների մոտ, որտեղ էլ ապրիլ ամսին գրում է իր հայտնի հիշողությունները Երևանի ուղղիչ տան մասին[6]:

Ստորև ներկայացվող արխիվային վավերագրերը ցույց են տալիս Ե. Չարենցի բանտային կյանքի վերջին երկու ամսվա ոչ ամբողջական փաստաթղթային շարժը, որն, ի վերջո, հանգեցնում է նրան բանտից վաղաժամկետ ազատմանը:

Վավերագրերը՝ բնագիր, ինքնագիր թե պատճեն, ներկայացված են՝ հիմնականում հարազատ մնալով բնագրին, պահպանելով այն ժամանակվա ուղղագրության կանոնները: Եթե առանձին դեպքերում կատարվել են անխուսափելի միջամտություն կամ ուղղում, ապա այդպիսիք դրվել են ուղղագիծ փակագծերի մեջ:

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ,
ՌՈՒԶԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

– 1 –

Գաղտնի. շտապ

Հ. Ս. Խ. Հ.
ՆԵՐՔ. ԳՈՐԾ. ԺՈՂԿՈՄԱՏ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ
ՔԱՂ. ՅԵՐԵՎԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐ ԸՆԿ. [Լ.] ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ
ԿԱՄ ՆՐԱ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԸՆԿ. [Զ.] ԱՇՐԱՖՅԱՆԻՆ

---

[5] *ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 23:*

[6] *Տե՛ս Ե. Չարենց. Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից, Թիֆլիս, 1927: Սույն հիշողությունները հրատարակելիս, մեր կարծիքով, Գլավլիտի (գրականության և հրատարակչական գործի գլխավոր վարչություն) խմբագրությունն այն բավական «մշակման է ենթարկել»: Երևանի ուղղիչ տունը Չարենցի պատկերումով ներկայացված է գունեղ՝ բանտի տարածքում ծաղկանոցներ, կուլտուրկրթական բաժիններ, դաստիարակիչ համապատասխան միջոցառումներ և այլն, որոնք ընթերցողի մոտ կասկածի տեղիք են տալիս: Մի բանտ, որը դրանից առաջ (1921 թ. փետրվարյան օրերին) ու, հատկապես, հետո՝ 1930-ական թվականներին, թե մարդկանց զանգվածային բռնությունների, կտտանքների ու մահվան ինչպիսի գնդան է եղել:*

- 100/C *Այսու ուղարկվում է կալանավոր Յեղիշե*
10/XI–1926 թ. *Չարենցի դիմումը. Ձեզ ի կարգադրություն:*

ԱՌ – դիր.– վերոհիշյալը 1 թերթից:

ՀԱՆՐՈՒՂՏԱՆ ՊԵՏ՝ /ստորագր./ ՉԱԽՄԱԽՉՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ /ստորագր./ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 13: Մեքենագիր, պատճեն:

– 2 –

(Մակագրություն) *Հ. Ս. Խ. Հ. Արդարադատության ժողկոմ*
Շտապ ուղարկել *ընկ. Լևոն Վարդապետյանին*
կամ փոխանորդ Զ. Աշրաֆյանին

Խնդրում եմ այսոր անցնել ինձ մոտ, քանի որ ունեմ անելու մի շարք Շատ կարեվոր հայտարարություններ: Այլ դեպքում յեթե առաջանան բարդություններ՝ յես իմ վրայից վերացնում եմ ամենայն պատասխանատվություն:

926/10/ XI *Յեղիշե Չարենց*
Յերեվան
Ուղղիչ տուն

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 14: Ձեռագիր, ինքնագիր:

– 3 –

Հ. Ս. Խ. Հ. *Շտապ-գաղտնի*

ՆԵՐՔ. ԳՈՐԾ. ԺՈՂԿՈՄԱՏ *ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ*
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ *ԸՆԿ. ԴԱՆԻԼՈՎԻՆ*
№ 127 *Այսու ուղարկվում է Ձեզ խնամքիս*

հանձնված Ուղղիչ տան
10 փետրվարի 1927 թ. *կալանավոր ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ*
քաղ. Յերեվան *դիմումը ի տնօրինություն:*

Ա ռ դ ի ր. – 1 թերթ

ՀԱՆՐՈՒՂՂԻՉ ՏԱՆ ՊԵՏԻ ՈԳ՝ */ստորագր./ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ*

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ */ստորագր./ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, գ. 15: Մեքենագիր, պատճեն:

– 4 –

(Մակագրություն)
Շտապ կարգով գաղտնի ուղարկել ընկ. Դանիլովին ի տնորինություն /ստոր./ 10/ II. [19]27 [թ.]

Հ. Ս. Խ. Հ. Արդժողկոմատի դատախազական բաժնին. կալանավոր Յե. Չարենցից

Դիմում

Սույն թվի հունվարի 22-ին Հայաստանի Գլխավոր դատարանը վորոշում է հանել իմ կալանքը՝ փոխարինել պարտադիր բժշկությամբ վորևե սանատորիայում, սակայն մինչև հիմա, չնայած վոր անցել է արդեն 18 որ, դատարանի վորոշումը դեռ կյանք չի մտցված և յես շարունակում եմ մնալ կալանքի ներքո և չգիտեմ, թե մի[ն]չև յերբ պիտի տևի այս տաժանքը: Յես չգիտեմ, թե խորհրդային վո՞ր որենքների հիման վրա յե, վոր դատական վորոշումը կյանք չի մտցվում 18 որվա ընթացքում. Կարծում եմ, վոր յեթե գոյություն ունի դատական վորոշում մեկի կալանքը փոխարինել բժշկությամբ՝ նրան վոչ վոք իրավունք չունի պահելու և վո՞չ մի որ կալանքի ներքո: հարցը պարզ լինելու համար հարկ եմ համարում հայտնել, վոր դատական վերոհիշյալ վորոշումը ստաց-վելուց հետո ներքժողկոմատի կողմից իյձ հայտնվեց, վոր դատական այդ վորոշումը դեռ պետք է անցնի ներքգործժողկոմատին կից Բաշխիչ Հանձնաժողովի միջոցով,

վորից «հետո միայն այն կարող է ձեվակերպվել և կյանք մտցվել»: Յեվ քանի վոր այդ պրոցեդուրան ինձ անհայտ պատճառներով չափազանց ձգձգվեց՝ յես ստիպված յեղա մի գրությամբ հայտնել կալ. բաժին, վոր հրաժարվում եմ սանատորիա գնալուց, և խնդրում եմ ինձ հանգիստ թողնել կրելու իմ լիակատար կալանքը: Իմ հիժյալ գրությունը եյապես մի բողոք եր ներքգործժողկոմատի կողմից իմ հանդեպ գործադրվող ծայր աստիչանի կամայական վերաբերմունքի դեմ, յերբ այդ հիմնարկության կողմից անտես եր առնվում մի վորոշում, վորը ուղղված եր կիրառելու համար: Յեվ ապա յես կարծում եմ, վոր յեթե վորևե կալանավորի նկատմամբ գոյություն ունի դատական վորոշում՝ այն պետք է շտապ կարգով կիրառվի՝ առանց ի նկատի առնելու տվյալ կալանավորի սուբյեկտիվ ցանկությունը: Եվ ի՞նչ ոբյեկտիվ ճշմարտություն եր պարունակում իր մեջ դատական հիշյալ վորոշումը, յեթե իմ հայտարարությամբ, թե «յես չեմ ուզում սանատորիա գնալ» – այն պետք է չեղյալ համարվեր: Բացի այս՝ Կալ-բաժինը մինչև որս ինձ այնպես եվ չկարողացավ բացատրել, թե վորպիսի՞ն պետք է լինի իմ իրավական-քաղաքացիական դրությունը՝ կալանքս պարտադիր բժծկությամբ փոխարինելուց հետո. Յես մնո՞ւմ եմ կալանավոր և ուղարկվում եմ սանատորիա իբրև այդպիսի՞ն, թե վոչ: Սրանով ամենաբուռն կերպով բողոքելով ներքգործժողկոմատի կողմից դատական մարմինների վորոշումների հանդեպ գործադրվող նման կամայականության դեմ՝ խնդրում եմ շուտափույթ կերպով հայտնել ինձ իմ իրավական դրության մասին և շտապ կարգով կիրառել իմ վերաբերյալ գոյություն ունեցող վորոշումը: Այլև խնդրում եմ հիշյալ խնդիրները պարզելու համար ինձ մոտ ուղարկել դատախազին, վորովհետև յես միանգամայն կորցրել եմ հույսս, վոր առանց դրան ներքգործժողկոմատի կողմից յերբևե կարող է կյանք մտցվել իմ վերաբերյալ գոյություն ունեցող դատական վորոշումը:

Կալանավոր Յե. Չարենց

1926. 10. II*
Յերեվան. Ուղղիչ տուն

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 16 և շրջերես: Ձեռագիր, ինքնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Կենտգործկոմի փոքր նախագահության 1927 թ. հունվարի 12-ի նիստի -75 արձանագրությունից.

-	Լ Ս Ե Ց Ի Ն	Վ Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն
7.	*ՀՍԽՀ Ներքգործժողկոմատի միջնորդությունը՝ Կենտրուղղիչ տան կալանավոր ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ վաղաժամ ազատելու մասին, համաձայն Ուղղիչ աշխատանքային Բաժնի Բաշխիչ Հանձնաժողովի ս. թ. հունվարի 8-ի վորոշման: /Ներքգործժողկոմատի ս. թ. հունվարի 1-ի նո. 34/գ. գրությունը/: Զեկ. ընկ. Ո. ԴՈՒՐԳԵՐՅԱՆ:*	*Հանձնարարել Արդժողկոմատին սույն գործին տալ համապատասխան ընթացք, համաձայն ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի 457-րդ հոդվածի:*

Հայկենտգործկոմի նախագահի տեղակալ՝/Հ. Ազատյան/
Հայկենտգործկոմի քարտուղար՝ /Հ. Տատյան/:

12 հունվարի 1927 թ. Իսկականի հետ ճիշտ է Հայկենտգործկոմի
Նո. 6206 քարտուղարության
Յերեվան վարիչ՝ /ստորագր./ Գ. Հախումյան

ՀԱԱ, ֆ. 571. ց.1, գ. 13, թ. 18: Մեքենագիր, պատճեն:

– 6 –

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ

Դ Ի Մ Ո Ի Մ

(Մակագրություն)
«Նախ[ագահության]
նիստին» 10/I [19] 27 [թ.],
Չարենցի հարցը լուծված է՝
12/ I [19] 27 [թ.]

Մի խումբ գրականագետներից
յեվ արվեստագետներից

Բանաստեղծ ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ գործած քրեական հանցանքի հանդեպ խորհրդային դատարանը ցույց տվեց ամենախիստ վերաբերմունք, անվերապահորեն դատապարտելով նրան համապատասխան պատժի յեվ դրանով ապացուցեց, վոր ինքը կանգնած է վճռականապես հեղափոխական որինապահության անաչառ տեսակետի վրա:

Բայց նկատի առնելով այն հանգամանքները,

1. վոր բանաստեղծ ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑՆ այդ հանցանքը կատարել է հոգեկան աննորմալ վիճակում, ինչպես կարելի յե յենթադրել՝ հիմք ունենալով բժշկական փորձագետների կատարած քննության արդյունքները,

2. վոր ՉԱՐԵՆՑԸ ուղղիչ տան անցկացրած իր ժամանակը լրացրել է կուլտուրական-կրթական աշխատանքներով (նա ընտրվել է կուլտհանձնաժողովի նախագահ յեվ ցույց է տվել նվիրված յեվ յեռանդուն գործունեություն),

3. վոր ՉԱՐԵՆՑԻ կնոջ՝ ԱՐՓԻԿԻ մահը, վորի հետ խորապես կապված եր բանաստեղծը, տեղի ունեցավ ՉԱՐԵՆՑԻ համար աննորմալ պայմաններում յեվ այդպիսով ստեղծվեց ՉԱՐԵՆՑԻ համար հոգեկան ավելի ծանր դրություն,

4. վոր արդեն չորրորդ ամիսն է, վոր ՉԱՐԵՆՑԸ գտնվում է ուղղիչ տանը յեվ այդպիսով մասամբ կրել է իր պատիժը,

5. վոր այսուհետև կալանքի տակ պահելը կարող է կործանարար ազդեցություն գործել ՉԱՐԵՆՑԻ ստեղծագործական կարողության վրա, նկատի առնելով այս բոլորը, մի խումբ խորհրդային գրականագետներ յեվ արվեստագետներ սրանով դիմում են Հայաստանի խորհրդային իշխանության բարձրագույն մարմնիդ յեվ խնդրում ներումն շնորհել տաղանդավոր բանաստեղծին յեվ հնարավորություններ ստեղծել նրա համար՝ բուժվելու:

Յոլակ Խանզադյան
Հ. Հովհաննիսյան

Զապել Եսայան
Մամիկոն Գևորգյան
Լ. Քալանթարյան
Գ. Վանանդեցի
Միքայել Արուտչյան
Գուրգեն Մահարի
Նաիրի Զարյան
Եդուարդ (անընթեռնելի է)
Ավետիք Իսահակյան
Մ. Զանան

ՀԱԱ, ֆ. 571. ց. 1, գ. 13, թ. 19 և շրջերես: Մեքենագիր, պատճեն:

– 7–

Կենտրոնական Գործադիր կոմիտեի Նախագահության

Տեղեկանալով ստույգ աղբյուրից, թե ի՛նչ անթույլատրելի վերաբերմունք է ցույց տվել Յե. Չարենցը նրան ներելու մասին Նախագահությանը դիմողների նկատմամբ, յես իմ ստորագրությունը հիշյալ դիմումից հետ եմ առնում:

Հ. Հովհաննիսյան

*14/ I. 1926 [թ.]**
Յերևան

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 21: Ձեռագիր, ինքնագիր:

– 8 –

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՅԵՐԵՎԱՆ,
Շահումյան փողոց № 1
26 փետրվար 1927 թ. 3020/9, ի գիտություն, Գաղտնի

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Հարակից ներկայացվում է Բաշխիչ Հանձնաժողովի ս. թ. փետրվարի 24-ի նո. 11-ա արտակարգ նիստի արձանագրության պատճենը ի գիտություն:

Առդիր.– վերոհիշյալը:

Ի Տ. Կալբաժնի վարիչի յեվ Բաշխ. Հանձ.
Նախագահ՝ (ստորագրություն) ՍԻԼԱԽՏԱՐՅԱՆ

Բաշխիչ Հանձնաժողովի Քարտուղար՝
(ստորագրություն) ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 22: Մեքենագիր, պատճեն:

– 9 –

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 11 – Ա
1927 թ. փետրվարի 24-ի

Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կալանավայրերի Բաժնին կից Բաշխիչ Հանձնաժողովի արտակարգ նիստը հետևյալ Կազմով՝ նախագահությամբ նույն բաժնի վարիչի փոխարինող, ՆԳԺԿ-ի արտաքին բաժնի տեսուչ … ընկ. Սիլախտարյանի

Անդամակցությամբ՝
Բանվորա-գյուղացիական տեսչություն՝ ընկ. Ժ. Արեշյան
Արհմիությունների ներկայացուցիչ՝ ընկ. բացակայում էր
Գլխավոր դատարանի՝ ընկ. Արեվշատյան
Հայպետքաղվարչություն՝ ընկ. Դուլգարով

Ներկայությամբ՝

Կալանավայրերի բաժնի տեսուչ՝ ընկ. Պապունյան
Դատախազական բաժնի ներկայացուցիչ՝ ընկ. Դանիյելով
Յերեվանի Ուղղիչ տան պետի փոխարինող՝ ընկ. Հ. Հովհաննեսյան
,, ,, ,, կուլտ-կրթ. բաժնի վարիչ՝ ընկ. Գ. Սահակյան
,, ,, ,, հիվանդ. գլխ. բժ.՝ ընկ. Լուսինյան

Քարտուղարությամբ՝ Բարսեղյանի

Լ ս ե ց ի ն

Յերեվանի Ուղղիչ տան ներքոհիշյալ կալանավոր, համաձայն 1927 թ. 21/2 Գլխավոր դատարանի վորոշման, նյարդային հիվանդներին բժշկող սանատորիաներից վորյեվե մեկը պարտադիր բժշկության ուղարկելու մասին:*

1. ՉԱՐԵՆՑ/ՍՈՂՈՄՈՆՅԱՆ/ՅԵՂԻՇԵ ԱԲԳԱՐԻ

Դատապարտված է Գլխավոր դատարանի կողմից ըստ Քր. որ. 14, 144 հոդ. 3 տարի ժամանակով ազատազրկման, առանց խիստ մեկուսացման և առանց իրավունքների սահմանափակման, կալանքը կրում է 1926 թ. սեպտեմբերի 5-ից, դարսեցի, ամուսնացած /ներկայումս այրի/, գրագետ, Յերեվանի բնակիչ, ծառայող, 1-ին դատվածություն, պատկանում է 3-րդ կարգի միջին շարքի, ունի հաշված 38 բանվորական որ կալանքի փոխարեն / տես Բաշխ. Հնաձ. 9բ. նո.238 արձ./: Գլխավոր դատարանի 1927 թ. 21-ի որոշմամբ կալանքը փոխարինված է պարտադիր բժշկությամբ, նյարդային հիվանդներին բժշկող սանատորիաներից վորևե մեկում:

Վ ո ր ո շ ե ց ի ն

1/. Նկատի ունենալով, վոր Ներքգործժողկոմատի կալանավայրերի բաժինը նյութական միջոցներ չունի Գլխավոր դատարանի 21/1 վորոշումը ի
կատար ածելու,
2/. վոր այդ հանգամանքը չի կարող հիմք ծառայել նրան հետագա կալանքի տակ պահելու,
3/. վոր կալանավոր Չարենցի կողմից միջնորդություն է հարուցված դատարանի վորոշումը ի կատար ածել իր սեփական նյութական միջոցներով, ուստի Բաշխիչ Հանձնաժողովի արտակարգ նիստը գտնում է հնարավոր Յեղիշե Չարենցին իր սեփական միջոցներով ուղարկել բժշկվելու: Հսկողությունը վերապահել Ներքգործժողկոմատին:

Իսկականը պատշաճ ստորագրություններով:
Իսկականի հետ ճիշտ է
Բաշխիչ հանձնաժողովի քարտուղար՝ Բարսեղյան

ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 23: Մեքենագիր, պատճեն: